ԶԱԼՑԲՈՒՐԳԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԴՈԿՏՈՐ ԱԼՈՅՍ ՔՈԹԳԱՍԵՐԸ ԵՒ «ՊՐՈ-ՕՐԻԵՆՏԵ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Սեպտեմբերի 12-ին՝ Խաչվերացի տոնին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Վանական խորհրդի նախագահ Տ. Փառեն եպիսկոպոս Ավետիքյանն հանուն Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընդունեց Հռոմեականաթոլիկ Եկեղեցու Զալցբուրգի արքեպիսկոպոս դոկտոր Ալոյս Քոթգասերին եւ «Պրո-Օրիենտե» կազմակերպության ներկայացուցիչներին՝ ուղեկցությամբ Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի պատասխանատու Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանի:

Ողջունելով հյուրերի այցը համայն հայության կենտրոն՝ Փառեն Սրբազանն իր խոսքում տեղեկացրեց, որ Նորին Սրբությունն այս օրերին հովվապետական այցով գտնվում է Ամերիկայի Միացյալ Նահանգների Հայոց Արեւմտյան թեմում: Սրբազանը անդրադարձավ նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ Վատիկանի միջեւ առկա սերտ եղբայրական հարաբերություններին, ինչպես նաեւ տասնամյակների համագործակցությանը «Պրո-Օրիենտեի» շրջանակներում:

Պատասխան խոսքում Զալցբուրգի արքեպիսկոպոսն իր երախտագիտությունը հայտնեց ջերմ ու բարեկամական ընդունելության համար, ապա անդրադարձավ «Պրո-Օրիենտե» կազմակերպության գործունեությանը՝ ի մասնավորի վերհիշելով կազմակերպության ղեկավարության բազում հանդիպումները Հայ Եկեղեցու նվիրապետական Աթոռների գահակալների հետ: Քոթգասեր արքեպիսկոպոսն արձանագրեց, որ նույն ջերմ ու եղբայրական հարաբերությունները շարունակվում են նաեւ այսօր ի դեմս Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանի:

Զալցբուրգի արքեպիսկոպոսի գլխավորած պատվիրակությունը, որի կազմում էին Ավստրիայի քաղաքական, հասարակական բազում գործիչներ, ներկա գտնվեց նաեւ Պատարագի սրբազան արարողությանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԷՍՏՈՆԻԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

Սեպտեմբերի 17-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Կաթողիկոսի հրավերով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին ժամանած Էստոնիայի Եկեղեցիների Խորհրդի պատվիրակությանն ընդունեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի վարիչ Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը: Հանդիպմանը ներկա էին ԵՀԽ Հայաստանյան Կլոր սեղան բարեգործական միջեկեղեցական հիմնադրամի եւ ԷԿԼՈՓ հիմնադրամի

ներկայացուցիչներ եւ Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի պաշտոնեությունը:

Ամենայն Հայոց Հայրապետի անունից Հովակիմ Սրբազանը ողջունեց պատվիրակության այցը Մայր Աթոռ եւ գոհունակություն հայտնեց Մայր Աթոռի եւ Էստոնիայի Եկեղեցիների Խորհրդի միջեւ ձեւավորվող հարաբերությունների համար: Ապա Սրբազանը ներկայացրեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու առաքելությունը աշխարհասփյուռ հայ ժողովրդի կյանքում, անդրադարձավ ներկայիս գործունեությունը: Էստոնական պատվիրակության անունից շնորհակալական խոսք ասաց Տ. Լազար եպիսկոպոս Գուրկինը:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին մի շարք հարցեր՝ հետագա հարաբերությունների առավել սերտացման, փոխադարձության փոխանակման եւ սոցիալական դիակոնիայի ոլորտում համագործակցության հաստատման վերաբերյալ:

Ապա Սրբազան Հոր ուղեկցությամբ Խորհրդի անդամները շրջեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարածքում, ծանոթացան նրա պատմությանը, այցելեցին Մայր Աթոռի թանգարաններ՝ ծանոթանալով հայ հոգեւոր մշակույթի գանձերին եւ սրբություններին:

Նույն օրը պատվիրակությունն այցելեց նաեւ Սուրբ Գայանե եւ Սուրբ Հռիփսիմե վանքերը, հանդիպումներ ունեցավ վանահայրերի հետ:

Օրվա վերջում Խորհրդի անդամներին հյուրընկալեցին Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսչական կազմը եւ ուսանողությունը: Տեսչության անունից հյուրերին ողջունեց փոխտեսուչ Տ. Տիրան աբեղա Պետրոսյանը, ներկայացրեց Ճեմարանի պատմությունը եւ առօրյան: Հանդիպման ընթացքում պատվիրակները ճեմարանականներին ներկայացրին Էստոնիայի եկեղեցիների հոգեւոր կյանքն ու գործունեությունը, պատասխանեցին ուսանողներին հետաքրքրող հարցերին:

Էստոնիայի Եկեղեցիների Խորհրդի պատվիրակները՝ ուղեկցությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանի, սեպտեմբերի 18-ին այցելեցին Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, ուր Հայոց Ցեղասպանության անմեղ զոհերի հոգիների հանգստության համար աղոթք բարձրացրին առ Աստված եւ իրենց հարգանքի տուրքը մատուցեցին՝ ծաղիկներ դնելով անմար կրակի մոտ:

Նրանք այցելեցին նաեւ Հայոց Ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, ուր նրանց ընդունեց թանգարանի տնօրեն Հայկ Դեմոյանը: Այստեղ խորհրդի անդամները ծանոթացան թանգարանի ցուցադրություններին, գրանցում կատարեցին հուշամատյանում:

Նույն օրը պատվիրակությունը եղավ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում: Ուղեկցությամբ Մատենադարանի տնօրեն Հրաչ Թամրազյանի՝ նրանք ծանոթացան հայ ժողովրդի բազմադարյա մշակույթի գանձերին եւ արժեքներին:

Այնուհետեւ Էստոնիայի Եկեղեցիների Խորհրդի անդամներն ուղեւորվեցին Հառիճավանք: Հառիճավանքի վանահայր Տ. Գորյուն աբեղա Առաքելյանը հյուրերին ներկայացրեց վանքի ներկայիս գործունեությունը, վանական կյանքի վերականգնման ուղղությամբ կատարվող աշխատանքը:

Պատվիրակությանը հյուրընկալեց նաեւ Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանը: Նրա ուղեկցությամբ հյուրերը եղան Վահանաբերդում, Գյումրիի Յոթ-

վերք Ս. Աստվածածին եկեղեցում, այցելեցին թեմի ընկերային կենտրոն՝ ծանոթանալով թեմից ներս իրականացվող հոգեւոր կրթա-դաստիարակչական, ընկերային եւ հովվական գործունեությանը:

Սեպտեմբերի 19-ին Էստոնիայի Եկեղեցիների Խորհրդի պատվիրակները Միածնաէջ Մայր Տաճարում մասնակցեցին Ս. Պատարագի արարողությանը, ապա հյուրընկալվեցին Խոր Վիրապի վանքում, ուր վանահայր Տ. Նարեկ աբեղա Ավագյանը ներկայացրեց վանքի պատմությունը եւ ներկայիս գործունեությունը:

Նույն օրը պատվիրակությունն այցելեց Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոց, ուր ճեմարանականները հանդես եկան հոգեւոր եւ ազգային երգերի կատարմամբ: Ուսանողներին հոգեւոր իր պատգամը բերեց պատվիրակության ղեկավար Տ. Լազար եպիսկոպոս Գուրկինը: Հյուրերը նաեւ ներկա գտնվեցին երեկոյան ժամերգությանը:

Սեպտեմբերի 21-ին Խորհրդի անդամները Մայր Տաճարում ներկա գտնվեցին Հայաստանի Հանրապետության Անկախության տոնի առիթով կատարվող Հանրապետական մաղթանքի արարողությանը, որ հանդիսապետեց Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Նույն օրը պատվիրակությունը՝ ուղեկցությամբ Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանի, այցելեց Քանաքեռի Ս. Աստվածածին եկեղեցի՝ մասնակցելու Սրբազան պատարագին:

Ապա Խորհրդի անդամները մեկնեցին Արագածոտնի թեմ, ուր այցելեցին Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցի եւ աղոթեցին Սուրբ Մեսրոպ Մաշտոցի շիրիմի առջեւ: Պատվիրակները հյուրընկալվեցին նաեւ առաջնորդարանին կից գործող դպրատանը, դիտեցին երիտասարդաց միության անդամների նկարները:

Պատվիրակությանը ներկայացվեց նաեւ թեմի հոգեւոր եւ շինարարական գործունեությունը եւ ապագայի հեռանկարները: Խորհրդի անդամներն առիթ ունեցան այցելելու Արագածոտնի թեմի պատմական վանքերն ու եկեղեցիները:

Սեպտեմբերի 22-ին Էստոնիայի Եկեղեցիների Խորհրդի պատվիրակությունն ավարտեց պաշտոնական իր այցը Հայաստան:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԷՍՏՈՆԻԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սեպտեմբերի 20-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց սեպտեմբերի 17-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին ժամանած Էստոնիայի Եկեղեցիների Խորհրդի պատվիրակությանը՝ գլխավորությամբ Նառվսկի եպիսկոպոս Լազար Գուրկինի եւ ուղեկցությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանի:

Լազար եպիսկոպոսը շնորհակալություն հայտնեց Նորին Սրբությանը Հայաստան